

* տամ ձեռով, որից տամ-ուկ, որ նշանակում է թաց եւ տամկուրիւն — թացութիւն: Տամուկ բառի կազմութեան համար համեմատիր քնուկ, քրտնուկ, որ հանդիպում ենք ժողովրդական երգի մէջ:

Դեռ քնուկ էր, քրտնուկ էր իմ եարը:

որ այդ բառերը նշանակում էր դեռ քնած էր, քրտնած էր իմ եարը: Ուրեմն տամուկ — նշանակում է թաց եղած, թրջուած:

Թամ արմատի * քամ-ան ձեւի պէս տամ արմատն եւս պէտք է որ ունեցած լինի * տաման մի ձեւ, որ պիտի նշանակէր տամ անող, այսինքն թրջող, թաց անող: Իսկ այդ * տաման ձեւը վերի կարգով պիտի դառնար *տաւան, որից վերջին ձայնաւորի սղումով — * տաւրն, իսկ սրանից — տաւն, որ է տօն:

Այսպիսով մեր տօն բառի նախաւոր իմաստն էր տամ անող, կամ որ նոյն է՝ թամ անող, այսինքն անձրեւ, թօն:

Տօն բառի այս հին իմաստը տարօրինակ չի թուայ եթէ նկատենք, որ լեզուն շատ հին երեւոյթ է, ամէնից յետամնաց վայրենի ցեղերն անգամ այսօր խօսել գիտեն: Քաղաքակրթութեան երեք հին շրջաններում — որսորդական, հովուական եւ երկրագործական — անձրեւը միշտ խանդարած է մարդկանց աշխատանքը, բռնադատած է իր որջի, հիւղի կամ խրճիթի մէջ անգործ ու պարապ նստել: Այրաբնակ որսորդի աշխատանքը անձրեւին պէտք է ընդհատուէր, որովհետեւ քօն էր, տօն էր, այսինքն թամ անող կամ տամ անող էր գալիս վերից: Մեր տօն բառի լատիներէն համարժէքը *feriae* ընդհանրապէս նշանակում է աշխատանքի ընդհատում, հանգիստ, պարապ: Երբ անձրեւ էր գալիս հին մարդը հարկադրաբար մնում էր անգործ, պարապ: Երբ կեանքի զարգացման հետեւանքով կամովին ստեղծուեցան անգործութեան, աշխատանքի ընդհատման, պարապութեան օրեր, այսինքն տօներ — այս նոր երեւոյթը որակուեցաւ հին բառով, որ է տօն: Թէ ինչո՞ւ տօն եւ ոչ քօն սա մի խնդիր է, որ դժուար է լուծել. որովհետեւ դեռ հաստատապէս լուծուած չէ թէ որդեօք ք ձայնի մերկացումն է, ան թէ տ ձայնի թաւացումն է քն: Այսինքն քօն բա՞ռն է հնագոյն կերպարանքը տօն բառի թէ տօն բառը՝ քօն բառի: Այս կարգի բառերի ցեղակցութիւնը հաստատել — արդէն նշանակում

է ստուգարանել: Մնացածը մի խնդիր է, որ ընդհանուր լեզուագիտութեան կը վերաբերի:

Այսպիսով ինչպէս տեսնք տօն եւ քօն նոյն բառի տարբեր ձեւերն են եւ երկուսն էլ նշանակում են անձրեւ: Նրանք, որ համեմատական բառաբեր ունին՝ կարող են որոնումներ կատարել այս ուղղութեամբ եւ տեսնել թէ արդեօք տօն նշանակող օտար բառերը որեւէ կապ ունին անձրեւի հետ: Ես հնարաւորութիւն չունիմ այդ աշխատանքը կատարելու:

Ն. ԱՂԱՍԵԱՆ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԴՐՐՉԵԱԼ ԿՈՐԻՆԻ ԹՈՒՐՉԸ

«Հանդէս Ամսօրեայ»ի մէջ, 1927, Թիւ 9, պ. Ֆնտղեան հաճել է պատասխան գրել մեր դիտողութիւնների առթիւ, տպուած նոյն հանդէսում:

Պ. Ֆնտղեան մի գիւտ է արել, Կորինի մի հատուածի մի նոր մեկնութիւն: Որպէս ապացոյց, որ ինքը ճիշտ է հասկանում յիշեալ հատուածը, կոչ էր արել Փոքր-Կորինի եւ Ագաթանդեղին, որ սրանք եւս իրեն իբրեւ թէ համամիտ են: Ահա՛ իր յայտարարութիւնը, «Փոքր-Կորինի եւ Ագաթանդեղ յանկարծահասով մահ չեն հասկանար»:

Արդ մենք ցոյց տուինք, որ այս կոչումը յանիրաւի է, ոչ Փոքր-Կորինի եւ ոչ Ագաթանդեղ պ. Ֆնտղեանի գործին վկաներ չեն: Կարծեմ, պարզ է խնդիրը:

Բայց տեսէ՛ք, ինչպէս է թլուրում հարցը պ. Ֆնտղեան ասելով, որ մենք զբաղուած ենք Կեղծ-Կորինով, փոխանակ հարագատի, «իբր ուղիղը գերազասելով», այլ եւ ուզում ենք որպէս թէ «Կեղծ-Կորինով ուղղել հարադատը»: Մտքի այս խտորումը ներելի չէ բնաւին մինչեւ անգամ պ. Ֆրնտղեանի նման բանասէրին: Հակառակորդին հասկանալը եւ իր ասածը յիշելը առաջին եւ տարրական պահանջն է ամէն մի վէճի, առանց որի վէճն իսկ դառնում է ժամավաճառութիւն: Սրանով պ. Ֆնտղեան կրկնակի մեղանշում է, զրպարտելով նախ Կեղծ-Կո-

րիւնին եւ Ագաթանգեղին եւ յետոյ մեզ :
 Խնդիրը բնաւ այն չէ, թէ ինչպէս է վերա-
 բերում Փոքր-Կորիւնը հարազատին : Աւելին
 կ'ստանք նրա վերաբերումը մեզ համար բո-
 լորովին պարտադիր չէ : Հարցն այն մասին
 է, թէ Կեղծ-Կորիւնը իրաւ կողմնակից է
 պ. Ֆնտզլեանի ըմբռնումին, ինչպէս վեր-
 ջինս հաւատացնում է, թէ սա սխալում է
 իր կոչումով : Յոյց տուինք, որ սխալում
 է : Ուրիշ ոչինչ : Նկատել էինք, որ Փոքր-
 Կորիւնի մէջ կան խօսքեր, որ դուցէ սպրդել
 են պ. Ֆնտզլեանի ուշադրութիւնից, խօս-
 քեր, որ վկայում են, որ «յանկարծահաս»ով
 Վահանի մահն է հասկանում : Պ. Ֆնտզլեան
 առարկում է, որ այս խօսքերը Փոքր-Կորիւ-
 նի «ընդմիջարկութիւն» են, մոռանալով, որ
 կարեւորն է հենց այդ է, որ պարզում է մեզ
 Փոքր-Կորիւնի ըմբռնումը : Այդ ըմբռնումը
 ընդդէմ է պ. Ֆնտզլեանին եւ ուրեմն, անար-
 դար գործ է կատարում պ. Ֆնտզլեան, երբ
 յայտարարում է որ Կեղծ-Կորիւնը նման է
 մտածում : Մենք չենք, որ դիմում ենք Փոքր-
 Կորիւնին մեր սասածը հաստատելու համար,
 այլ ինքը պ. Ֆնտզլեան եւ մենք Փոքր-Կորիւնը
 քննելով, չենք ուզում հարազատ Կորիւնը
 ուղղել, այլ ուղղել պ. Ֆնտզլեանի սխալ
 կոչումը : Առանձին նրբութիւն չէ հարկաւոր
 որ հասկացուի այս պարզ ճշմարտութիւնը :

Սակայն պ. Ֆնտզլեան թիւրեւով հար-
 ցը, դարմանում է, որ մենք Վահանին սուրբ
 ենք համարում : Դարձեալ, նախ մենք չենք
 սուրբ համարողը, այլ Փոքր-Կորիւն : Եւ երկ-
 րորդ՝ ինչո՞ւ է պ. Ֆնտզլեան դարմանում .
 որովհետեւ, Վահան «աշխարհիկ հոգերով եւ
 կրքերով զգածեալ մարդ էր» : Հարազատ
 Կորիւնը համարում է Վահանին «այդ պա-
 տուական եւ երկիւղած» եւ ուրեմն հնա-
 բաւոր էր, որ մահից յետոյ սրբանար, քանի
 որ այդ ուղին բաց է ամէն մի բարեպաշտ
 բրիտանէի համար : Կեղծ-Կորիւնը, որ-
 բան եւ ազէտ եւ խեղճ պ. Ֆնտզլեանի աչ-
 քին, կարող է իր կողմէն հարցնել պ. Ֆնտ-
 զլեանին, ինչպէ՞ս է որ մեզսայից Վահանը,
 «որմէ սրբութեան բոյր այնքան քիչ կը
 բուրէր» հանդիսանում է քրիստոնեայ աշ-
 խարհի հովանաւոր, Սահակ եւ Մաշթոց
 սուրբ հայրերին փոխարինող : Փոքր-Կորիւն
 իրաւամբ կարող է նախատել պ. Ֆնտզլեա-
 նին, որ իր աչքի գերանը ուզում է ուրիշի
 աչքը խօթել :

Նման սխալ էր գործել նոյն բանասէրը
 եւ Ագաթանգեղի նկատմամբ, սրան եւս սուտ
 վկայութեան կոչելով : Ագաթանգեղ յարմա-
 րեցրել է Վահանի հատուածը Տրդատին,
 յանկարծախաւ բառը փոխարինելով յանկար-
 ծախաւով : Գիտակցական փոփոխութիւն
 է, համաձայն իմաստին :

Պ. Ֆնտզլեան յայտարարում է որ այդ-
 պիսի բառ չկայ եւ որ զբնագրական սխալ է
 փոխան յանկարծահաս-ի : Անհիմն ենթա-
 դրութիւն : Նախ այդպիսի բառ կայ : Ագա-
 թանգեղն իսկ ուրիշ տեղ գործ է ածում նոյն
 բառը՝ «ուրախութիւն եղեւ եւ լինի ընդ
 անկարծակամ դարձ կենացն» (ԾԶ, էջ
 243) : Երկրորդ՝ Ագաթանգեղի բաղմաթիւ
 ձեռագիրներէից եւ ոչ մինը հիմք չեն տալիս
 այդպիսի սրբագրութեան : Էջմիածնի գիտա-
 կան հրատարակութիւնը պահել է յանկար-
 ծակամ ընթերցուածը եւ իրաւամբ : Խուսա-
 փելու է ինքնակոչ ուղղումներից : Սրբա-
 գրութիւնն եւս իր հիմքերն ունի եւ բաւա-
 կան չէ մտաբ ճակատին դնել եւ կամայա-
 կանութեան դաշտ բաց անել : Անցնենք այժմ
 հարազատ Կորիւնին :

* * *

Ասել էինք որ պ. Ֆնտզլեանի մեկնու-
 թիւնը Վահանի հատուածի անտես է անում
 ինչ ինչ քերականական անհարթութիւններ :
 Պ. Ֆնտզլեան մեզ պատասխանում է, որ մեր
 նկատողութիւնները այլ բան չեն եթէ ոչ
 «թիւր հայերէնագիտութեան փունջ» : Եւ
 այս քաջ հայտնէտը փորձում է ցրել մեր
 սխալները, կարելի է ասել, թերավարժ
 մտրուկի կայտառութեամբ :

Նախ՝ նկատել էինք, որ պ. Ֆնտզլեանի
 մեկնութեամբ «բարեացապարտին Վահա-
 նայ» սեռական հօլովը դառնում է անուն
 բայի, որ քերականական անհեթեթութիւն է :

Տեսէ՛ք, ինչ է պատասխանում պ.
 Ֆնտզլեան. «մեր միտքը չէ եղած բնաւ ա-
 լելորդ դասախօսութիւն ընել՝ գիտնականնե-
 րու ընթերցման ենթարկուած յօդուածի մէջ
 մատնանիչ անել օրինակներ նոյն ինքն Կորիւնէ
 եւ ցոյց տալ թէ սովոր է «այլ, իսկ» շաղ-
 կապներէ անմիջապէս ետք սեռական հո-
 լովով գնել անունը» :

Բայց տեսնելով, որ անգէտի հետ գործ
 ունի, «հարկադրուած է մէջ բերել իբր
 ապացոյց սա օրինակները : «Իսկ Պաւղոս[ի]
 (իր ուղղումն է) ի մտի եղեալ էր», եւ «այլ

սրբոյն Պաւղոսի չորեքտասանեքումբը թղթովք պատմէ» :

Որքան եւ մեղմ լինել կամենանք, բայց ստիպուած ենք ասել, որ քերականական խակութիւն է կարծել, որ որեւէ չաղկապ կարող է անուն բային փոխել սեռական հոլովի: Կարելի էր լուրթեամբ անցնել այս պարագան, որպէս մի անզգոյշ սայթաքում, մի տեսակ lapsus amatoris:

Բայց ստիպուած ենք յիշեցնել, որ նրա մատնանշած սեռական հոլովները բնաւ կապ չունեն նախընթաց չաղկապի հետ, այլ կախուած են անցեալ դերբայից համաձայն որոշ քերականական երեւոյթի, որ յայտնի պիտի լինի նաեւ պ. Ֆնտզլեանին: Երբ ստորոգեալը արտայայտուում է անցեալ դերբայով կամ աներեւոյթ եղանակով՝ ենթական կարող է դրուել սեռական հոլովով, կամ պահել ուղղականը: Կորիւն հաւատարիմ է այս կանոնին: Այսպէս Կորիւն գրում է. «վասն որոյ երանելոյն հայեցեալ . . . , դառնայ»: «Ձայս աւճան ընկալեալ ի տեանն էրանելի առաքելոցն . . . իսկ Հարելին գայն լուեալ, փութանալի հասանէր»: «Իսկ աշակերտասէր վարդապետին դտարեալս ընդ իւր յերկուս բաժանեալ . . . կարգէր» եւ այլն, գրեթէ ամէն մի էջում պատահում են նման դարձուածներ: Միեւնոյն ժամանակ պահում է երբեմն ուղղական ձեւը՝ «Իսկ ցանկալի տեանն եղբայրն Յակոբոս դհամաւրէն իսկ զգունդն սրբոց հանդերձ սրբասէր տերամբն յաւրինակ առեալ ի թղթի իւրում ասէ»: եւ այլն:

Պ. Ֆնտզլեան բերում է երկու օրինակ, մէկը նախապէս սրբագրելով առանց որեւէ անհրաժեշտութեան: Տպագիրն ունի՝ «Իսկ Պաւղոս ի մտի եղեալ էր», Ֆնտզլեան ուղղում է «Պաւղոսի»: Մէկը թէ միւր «Իսկ»ի հետ կապ չունին եւ կախուած են «եղեալ էր» բայից:

Երկրորդ օրինակն է՝ «Այլ սրբոյն Պաւղոսի չորեքտասանեքումբը թղթովք պատմէ զիւր առաքելակիցս եւ նիգակակիցս եւ ուրախակիցս իւր առնէ»: Պ. Ֆնտզլեան, որ սրբագրութեան առանձին տենդ ունի, յուլանում է նկատել, որ այս նախադասութեան մէջ երկու գիմորոշ բայերից մէկը պէտք է անցեալ դերբայ լինի, համաձայն լեզուի կանոնաւորութեան եւ Կորիւնի սովորութեան: Այսինքն պատմէ սխալ ընթերցուած

է, փոխանակ պատմեալ (երեւի պատմել գրութիւնից սխալ արտագրուած): «Այլ Պաւղոսի պատմեալ . . . առնէ», կանոնաւոր ձեւ է, որ պատահում է Կորիւնի գրեթէ իւրաքանչիւր էջում: Ուրեմն, ի՞նչ մնաց պ. Ֆնտզլեանի «գասախօսութիւնից», որ առաջին անգամ զլացել էր անել եւ միայն յետոյ հարկադրուած անում է:

«Բարեացապարտ» բառն եւս մի առիթ է պ. Ֆնտզլեանի համար փայլելու իւրովի յատկութեամբ:

Դուրս է դալիս, որ այս բառը «անտրամարանական» կերտուած է, որ ունի իր «գազտնիքը» եւ արդոյ բանասէրը փորձում է լուծել առեղծուածը, կուժ ու կուլան կոտրելով այս անգամ եւս Կորիւնի դիւին:

Պ. Ֆնտզլեան դիտէ, որ Մակարայեցոց գրքի թարգմանիչը Կորիւնն է, դիտէ, որ այս դիրքը թարգմանելիս Կորիւն կազմել է չարեացապարտ «վայելուչ» բառը, «գամենայն չարեացապարտ զՄենեղաւոս արձակել ի պարտեաց»: Յետոյ երբ սկսել է Մաշթոցի կեանքը գրել, Կորիւն թխել է բարեացապարտ «անյաջող եւ անտրամարանական» բառը, չարեացապարտ-ի կաղապարին վրայ ձեւելով: Ասել է թէ Կորիւն, որին քաջ հայկարան է անուանում պ. Ֆնտզլեան, վսեմ ոճով, աւելի տկար էր հայերէնի մէջ, քան պ. Ֆնտզլեան:

Չէ, այս բոլորը սին ենթադրութիւններ են, անհիմն եւ անտեղի: Պ. Ֆնտզլեան, որ չի յապաղում սրբագրելու Պաւղոս՝ Պաւղոսի, անտեղի եւ սխալ, յուլանում է նկատել, որ չարեացապարտ բառն ինքն թիւր ընթերցուածի արդիւնք է: «Ձամենայն չարեացապարտ զՄենեղաւոս» ուղղելու է «գամենայն չարեաց պարտ զՄենեղաւոս», «գամենայն չարեացապարտ» լեզուական անհեթեթութիւն է, որ չի արտայայտում այն ինչ որ ուզում է ասել: Անշուշտ, մի թիւրիմացութիւն չկայ: Յոյն բնագիրը ունի՝ τῆς βλαχης κακίας αἰτιον, այսինքն «ամենայն չարեաց պարտ»: Ակնբերե է, որ չարեացապարտ թիւր ընթերցուած է, փոխան չարեաց պարտ ձեւի: Որ մեր ենթադրութիւնը ճշմարիտ է, հաստատում է նոյն Մակար. գիրքը, ուր հանդիպում ենք մի ուրիշ եւ ստոյգ արտայայտութեան՝ «եւ կամ գպարտ այլոց չարեաց ընկենուլ» (զլ. 13, 6): Միւս կողմից Եզնիկն ասում է՝ «որ թագաւորեցոյց

զչարն է պարտ չարեաց»։ Այս դասական վկայութիւնը միանգամայն վաւերացնում է մեր ուղղումը։

Սրբազրական մեթոդի պահանջները, կարծում ենք, լիովին յարգուած են եւ իրաւունք ունենք ասելու, որ Ս. Գրքում չարեացապարտ բառը դոյութիւն չունի։ Հետեւապէս պ. Ֆնտզլեանի խորիմաստ պոստաները պարապ դրօսանք են։ Կորիւն էլ անպարտ է այն «անտորամարանական» կերտուածների համար, որ մնում է միայն պ. Ֆնտզլեանի սեփականութիւն։

Կորիւն ինքն է կազմել բարեացապարտ բառը առանց ուրիշի ազդեցութեան, մի բարդութիւն, որ յատուկ է Կորիւնեան լեզուական ճաշակին. ի՞նչ է նշանակում։

Պէտք չկայ ծանրանալու մահապարտ, մեղապարտ, վրիժապարտ եւ նման բառերի վերայ եւ կամ ցոյց տալու, որ սրանց նախագաղափարը երանական *tanu-pəratā*, պահ. *tanapühr*, այլ եւ *pəratō-tanu*, կամ *pešo-tanu*, պարսկ. *pašotan*, որ նշանակում է անձնապարտ, ինքնապարտ, պէտք չկայ պրպելու այս բարդութեան սկզբնական իմաստը։ Մեր նպատակի համար բաւական է յիշել բարեացակամ, բարեացապաշտ բառերը, որոնց դասական ձեւն է բարեկամ, բարեպաշտ։ Վիճելի բարեացապարտի աւելի ստույգ ձեւն է, ուրեմն բարեպարտ։ Սրա իմաստը հասկանալու համար, մտարեւելու է՝ երախտապարտ, չնորհապարտ կազմութիւնները։ Երախտապարտը նա է որ պարտ է երախտիք, չնորհապարտը նա, որ պարտ է չնորհ։ Հետեւապէս եւ բարեացապարտը կամ բարեպարտը նա, որ պարտ է բարիք։ Երախտիք ասածը այլ բան չէ քան բարիք — Ս. Գրքում երախտիք համապատասխանում է յոյն ἀγαθὸν «բարիք» բառի, որով բարեացապարտ համազօր է երախտապարտի կամ երախտագէտի։

Կորիւն այսպէս է անուանում Վահան Ամատունի իշխանին։ Արդեօք անպատեհութիւն կա՞ր։ Ամենեւին ոչ։ Վահանը Սահակի եւ Մաշթոցի մօտ ուսել էր գիր եւ գպրութիւն, աշակերտել սուրբ հայրերին։ Մաշթոցի մահից յետոյ Վահանը հող է տանում վալելու։ յուզարկաւորութեամբ թաղելու նրա մարմինը Օշականում, երեք տարուց յետոյ կանգնում է խորան նրա նշխարների վերայ — այս արտայայտութիւն է երախտա-

գիտական զգացումի հանդէպ իր եւ համայն աշխարհի գրական ծնողի։ Վահանը երախտագէտ անձն էր, եւ Կորիւն իրաւունք ունէր այդպէս անուանելու։

Պ. Ֆնտզլեան մեծ եռանդով ընդգիմանում է մեր մեկնութեան, ուղեցոյց ունենալով, երեւի, Հայկազնեան բառագիրքը։ Բառագիրքը ասում է, որ բարեացապարտը նա է, «որ ի ձեռն բարերարութեանց պարտական առնէ զբարերարեալն»։ Անհիմն բացարուժիւն։

Պ. Ֆնտզլեան զգալով այս բացատրութեան տկարութիւնը, աշխատել է այլ կերպ հիմնաւորել նոյն իմաստը, պատմելով այն հեքիաթը, որ ձգտում էր, չարեացապարտի թիւրիմաց գնաւիք համարել բարեացապարտը։

Պ. Ֆնտզլեան գտնում է, որ մեր մեկնութիւնը չի պատշաճում այն գործածութեան, որ նկատուում է հեղինակների մօտ։ Այսպէս Ազանթաղեղ անուանում է Տրդատին բարեացապարտ։ Պ. Ֆնտզլեան հարցնում է, արդեօք Տրդատն եւս երախտապարտ էր։ Անպայման երախտապարտ էր եւ աւելի քան Վահանը։ Տրդատը խոզ էր եւ մարդ դարձաւ, երբ «յանկարծակամ» քրիստոնէութիւն ընդգրկեց եւ այս բանի համար նա յաւէտ բարեացապարտ էր։

Հայկազնեան բառագրքից քաղում է պ. Ֆնտզլեան եւ Սորենացու, Յովհան Կաթողիկոսի եւ Թովմայ Արծրունու անունները, որ նոյն բառը գործ են ածել իբրեւ թէ ուրիշ իմաստով, քան մեր մեկնութիւնը։ Այս նկատողութիւնը եւս ստույգ չէ։

Կորիւնից յետոյ բարեացապարտ բառը կիրառում է Ղեւոնդ Երէց եւ յետոյ Սորենացի։ Թովմա Արծրունին արտազրում է Ղեւոնդից եւ Յովհան Կաթողիկոսը, հաւանօրէն, Սորենացուց, եթէ ոչ Կորիւնից։ Հաշուի առնելու է միայն երկու առաջին հեղինակները։

Սորենացին նոյն բառը գործ է ածում Թէոդոս Կայսրի նկատմամբ։ Նախ պէտք է նկատել, որ Սորենացու ձեռագիրները տալիս են երեք ընթերցուած՝ բարեացապաշտ, չարեաց անպարտ, բարեպաշտ։ Այս ընթերցուածները հաշտեցնել կարելի է միայն, եթէ թաղելով որ սկզբնական ընթերցուածն եղել է բարեացապաշտ։ Թէոդոսի սովորական մակ-գիրն է բարեպաշտ։ Սակայն, ընդունենք որ ստույգ ընթերցուածն է բարեացապարտ։

Ի՞նչ անպատեհութիւն: Թէոդոս, որպէս քրիստոնեայ թաղաւոր պարտաւոր է բարիք գործել: Բարեացապարտը նա է, որ պարտական է բարիք անել, լինի ի տրիտուր ստացած բարիքի, լինի ի հետեւանս իր կոչումի, լինի ստիպուած որեւէ հանգամանքից: Յովհան Կաթողիկոս նոյն միտքը արտայայտելու համար, հարկ է տեսել աւելացնել «ի բարիս բարեացապարտ», խօսելով բիւզանդական Կոստանդին Կայսրի մասին (էջ 148):

Ղեւոնդ Երէցը պատմում է, որ Օմար ստանալով Ղեւոն կայսեր յաջող պատասխանը ամաչեց եւ «առաւել ես յաւելոյր զբարեխառնութիւն եւ զբարեմտութիւն առ ազգքրիստոնէից եւ ամենայն ուստեք բարեացապարտ զինքն ցուցանէք»: Ասել է թէ, Օմար աշխատում էր ամէն կերպ ցոյց տալ, որ ինքը պարտաւոր է բարիք գործել: Այստեղից առնում է եւ Թովմա Արծրունին:

Կարծում ենք, որ մեր տուած մեկնութիւնը իր տեղին է բոլոր դէպքերում եւ կարեւր չկայ հակադրամարանական ենթադրութիւններ:

Ի պէտս զարգացելոց քերականութեան մէջ պ. Ֆնտզլեան կարգացել է, որ «որ», յարաբերական դերանունը «երբեմն բաղմարար վարի»: Այստեղից հետեցրել է, որ կ'ուղէ որ գործ կ'ածէ, կ'ուղէ որք:

Ոչ, պ. Ֆնտզլեան: Լեզուի մէջ տարականն երեւոյթներն եւս իրենց հիմքն ունին եւ բանասիրութեան գործն է մեկնել երեւոյթները եւ ոչ թէ զարտուղին ընդհանրացնել քմհած ծաւալումով: Բարի է, որ Բագրատունին գրի է առել որի բաղմարար կիրառութիւնը: Գուցէ աւելորդ չէ, որ պ. Ֆնտզլեան սերտել է նրա գրածը: Բայց որպէս զի պ. Ֆնտզլեան իրաւունք ունենայ դաստիարակութիւն կարգալ այս մասին, պէտք է որ մի բան աւելի զիտենայ քան ինչ որ գրուած է երեք քառորդ դար յառաջ: Այսպէս Ֆնտզլեանի սերտած քերականները բերում են որպէս օրինակ որի յոգնարար գործածութեան Ս. Գրքի այս տունը «յամենայն ծառոց որ է ի գրախտիկ»: Ակներեւ անհետեւութիւն, որ ուղղելու է «յամենայն ծառոց որ է ի գրախտիկ»: Արդարեւ, բաւական է համեմատել յոյն բնագրի՝ ἀπὸ παντὸς ἑξέλου τοῦ ἐν τῷ παραδείσῳ, որպէս զի համոզուենք, որ սրբագրութիւնը ուղիղ է:

Սակայն հետունները չգնանք, մնանք Կորինի դրքոյկի սահմաններում, ուր տեսնում ենք որի բաղմարար գործածութեան դէպքեր: Մօտիկ քննութիւնը ցոյց է տալիս, որ այս դէպքերի մի մասը կարօտ է սրբագրութեան: Օրինակ, Կորին ունի՝ «աւրինակ առէք չարչարանաց եւ (յ)երկայնամտութեան զմարգարէսն, որ խաւսեցան յանուն տեսուն»: Միայն զրչութիւն է: Յակ. Թղթ. Կթղ. Դ. կարգացում է՝ «աւրինակ առէք, եղբարք, չարչարանաց եւ երկայնամտութեան զմարգարէսն, որք խաւսեցան յանուն տեսուն»:

Ուրիշ դէպք: Կորին ասում է՝ «մի՛ անփոյթ առներ շնորհացրդ որ ի քեզ են... եւ զանձն ապրեցուցես եւ զայնոսիկ որ քեզն լսիցես»: Այստեղ երկու բնորոշ գործածութիւն կայ. յոյնն ունի՝ μὴ ἀπέλει τοῦ ἐν σοῦ χαρισματοσ, ὁ ἐδόθη σοι. «Շնորհք» նշանակող յոյն բառը եզակի թիւ ունի, ուստի եւ յարաբերականն է եզակի: Մինչդեռ հայը նիւթական թարգմանութեամբ չարքսա ի վէ՛մ դրած է շնորհք, եւ յոյն ὁ թարգմանել է ճշդիւ որ, մոռանալով, որ «շնորհք» յոգնակի է:

Միեւնոյն օրինակում տեսնում ենք՝ «զայնոսիկ որ քեզն լսիցես», Ս. Գրքի թարգմանիչներն անգամ սիրում են յոյն անցեալ եւ ներկայ դերբայները արտայայտել յարաբերական նախադասութեամբ հայ լեզուի ոգու համաձայն: Այս դէպքերում զրեթէ ընդունուած կանոն է որ գործածել եզակի եւ թէ յոգնակի մտքով: Այսպէս յոյն τοὺς αχούοντας = «զլսողս», հայը թարգմանում է «որ լսիցեն» (հայի օրինակում՝ եղել է, անշուշտ, τοὺς αχούσαντας). Ուրիշ խօսքով հայ զարձուածները՝ որ լսեն, որ լսիցեն, որ լուեալ են համապատասխանում են յոյն դերբայներին: Աւետարանն ունի՝ երանի որ քաղցեալ եւ ծարաւի իցեն = οἱ πεινῶντες καὶ διψῶντες եւ այլն: Նոյն ոգով զերազաս է ասել «որ իմաստունք են» փոխան յոյն «իմաստունք»: Հաշուի է առնելու նաեւ pluralia tantum բառերի եզարար համաձայնութիւնը, որ յայտնի է ուրիշ լեզուներում:

Այսպիսով որի բաղմարար վարումը կամայականութեան խալ չէ եւ ոչ քերականական բթութեան ծնունդ: Եթէ թողնենք սխալ գրչութիւնները, մեծ մասամբ աշխարհիկ լեզուի ազդեցութեան տակ, միւս դէպքերը իրենց բնաւոր հիմն ու բացատրութիւնն ունին:

Արդ պ. Ֆնտզլեան պնդում է, որ Վահանի հատուածում՝ «Վահանայ . . . կենաց ամենեցուն լինէր, որ աշխարհածնիւն . . . վայելէր», դժածս իրար կապակից են: Չենք կարծում, որովհետեւ կարելի է ասել «ամենեցուն, որ», բայց անհեթեթութիւն էր «ամենեցուն լինէր, որ . . . վայելէր», սպասելու էր՝ վայելէի: Պ. Ֆնտզլեան նկատում է ներողամտաբար, որ մենք որի բազմաբար վարումին անգէտ որպէս թէ բնագրի՝ «զհամառասն որ ոչ միայն մեզ յայտնի է» սրբազրել ենք որք, եւ չի ուզում ծանրանալ այս ճախող ձեռնարկի վերայ:

Այստա, որ արգոյ բանասէրը չի ծանրացել, այլապէս պիտի տեսնէր, որ բնագրի որք ուղղում ենք որի եւ ոչ թէ, ինչպէս պ. Ֆնտզլեանն է կարծում, որք՝ որքի:

Յանկարծառաւ բառի առթիւ պ. Ֆրնտզլեան մի բան է միայն ապացուցանում յաջողութեամբ, որ հասնել նշանակում է հասնել, եւ յակարծահաս նշանակում է յանկարծահաս: Բայց բառիս դիրքը նախագասութեան մէջ մնում է մութ մինչդեռ այս է վէճի նիւթը: Չի կարելի ասել «Վահանայ . . . յանկարծահաս լինէր», չի կարելի ասել «ամենեցուն, որ վայելէր»: Մրանով տապալում է եւ պարոնի մեկնութիւնը հատուածի, որպէս հակաբերականական ոտնձգութիւն:

Մեր տուած բացատրութիւնը եւս անընդունելի է համարում, գուցէ եւ իրաւամբ: Մեր կողմից մի փորձ էր հիմնաւորել քերականորէն նախադասութեան հիմնաւորը իմաստը, ենթադրելով որ բնագիրը անաղարտ է: Փոքր-Կորիւնից սկսած մինչեւ նորագոյն բանասէրները մահուան իմաստով են ըմբռնել քննելի հատուածը: Վահանը «հայրենեաց որդի» է, այն հայրենեաց, որ մեռած են, եւ միեւնոյն ժամանակ Վահան նրանց «կենակից»: Ակներեւ է, որ կենակցութիւն չի կարող այս աշխարհում լինէր մեռած մարդկանց հետ:

Թերեւ, մեր միտքը աւելի ճշգրտած կը լինէինք, եթէ աւելցնէինք, որ յանկարծահասի ենթադրեալ գոյականի իմաստը բխում է նրանից, որ զեղջած է «կատարումն» կամ «կէտ» բառը, որպէս մի տեսակ ellipsis, փոխանակ լրիւ «յանկարծահաս (կէտ) կենաց» ձեւի: Օրհաս բառի մէջ եւս օր հասկացում է որպէս օր մահուան: Բնաւ յաւակ-

նութիւն չունինք պնդելու մեր մեկնութեան վերայ, այն պարզ պատճառով, որ ուր թարգմանութիւնը ստիպուած է տեղի տալ մեկնարանութեան, հետեւանք միշտ կը լինի թէական: Ստոյգն այն է, որ նախադասութիւնը իր ներկայ վիճակում քերականորէն անյարիբ է: Հաւանական է որ աղաւաղուած է: Ազատանգեղ եւ Փոքր-Կորիւն ունին «ասպնջական ցանկալի» բառերը, որ պակասում են Կորիւնի հատուածում: Կասկածելի է, մանաւանդ, երբ ի նկատի առնենք, որ Կորիւնի վերջաբանութիւնը բարւոք վիճակի մէջ չէ:

Դարձեալ նոյն երկու հեղինակները ունեն՝ բարեացապարտն Վահան, բարեացապարտն Տրդատ, փոխանակ Կորիւնի սեռական հոլովի, որ ուշադրութեան արժանի է: Վիճելի հատուածը հաւանորէն կարօտ է սրբազրութեան: * * *

Ասած էինք, որ Կորիւնի վերջաբանը կասկածի տեղիք է տալիս: Մաշթոցի աշակերտը, որ գրում է իր ուսուցչի կեանքը, կարիք չպիտի ունենար հաւատացնելու, որ ինքը գրում է « ոչ ի հին համբաւուց», այլ որպէս «ականատես»: Հակառակ իր յայտարարութեան նոյն հեղինակը ստորեւ խոստովանում է որ քաղել է «ի նշանաւոր գիտակաց» սակաւը: Մի հանգամանք, որ մթութիւն է շաղում Կորիւնի երկի շուրջը:

Պ. Ֆնտզլեան դտնում է, որ պէտք է հաւատալ, քանի որ Կորիւն «բարդ ի բարդ կը թուէ հաւատարիմ վկայի իր հանգամանքը»: Իսկ գիտակներից բանաբաղութիւնը: Մրա պատասխանն էլ ունի պ. Ֆնտզլեան: Գիտակ ասածը, որպէս թէ գիտուն չէ նշանակում, ինչպէս յայտնի է ամէն մի տղայի, այլ գիտցուած, եւ օրինակ է բերում երեւակ բառը, որ իբրեւ նման բնոյթ ունի եւ նշանակում է երեւոյթ:

Ոչ, պ. Ֆնտզլեան, գիտակ նշանակում է գիտցող, եւ երեւակ՝ երեւցող: Ուրիշ ոչինչ: Խնայելու է լեզուն եւ միտքը բռնաբարսիկ եւ ապարդիւն ճիգերից:

Կորիւն ասում է որ շուրջ «զամենայն արարեալս կտակաւ զիւրաքանչիւրսն [նշանակել]» (յաւելումը մերն է): Պ. Ֆնտզլեան շտապում է կտակաւ ուղղել գտակաւ եւ զարմանում է, որ մենք չգիտենք այս գիւտը: Այլիւ, նայելով ՀԲ.ի աւետում է որ բառի ամբողջական ձեւն է «ճշգիւ գտակաւ»:

Այստեղ եւս պ. Ֆնտզլեանի անխոհեմութիւնը գալիս է բախելու մեր զգուշութեան: Արդեօք բաւարար հիմ կա՞յ առաջարկուած սրբազրութեան: Կորիւնի ձեռագիրները կարգում են կտակաւ: Ազաթանգեղի մօտ համապատասխան հատուածում երկու հին ձեռագիրներից մէկը եւ հնագոյնը՝ գրուած 1261 թուին ունի կտակաւ, միւսը՝ գրուած 1293 թուին՝ գտակաւ: Թւում է թէ սրբազրութիւնը զոնէ վաղաժամ է: Այլեւ պ. Ֆնտզլեան ինքը պիտի ձեռնպահ մնար իր սրբազրութիւնից, իմաստի տեսակէտից: Ճշդիւ գտակաւ նշանակում է ճշդիւ, խուզիւ գտակ ծագելով գտանել բառից: Ականատես գրողը պէտք ունի՞ այս եզանակով վարուելու: Հարկաւ, չէ: Կամ գրողը ականատես չէ, կամ գտակաւ բառը իր տեղը չէ:

Կորիւն ասում է «ի նշանաւոր գիտակացն քաղելով զհամառուտան կարգեցաք, որ(ք) (մենք ենք գեղչում) ոչ միայն մեզ, այլեւ որ զմատենանսն ընթեռնուն, յայտնի է»: Ազաթանգեղի մօտ վերջին նախազատութիւնն է՝ «որք ոչ միայն մեզ, ով թագաւոր, այլ յորժամ քո առաջի զմատենանդ ընթեռնուցուն, յայտնի է»: Պ. Ֆնտզլեան կամենում է Կորիւնը սրբազրել ըստ Ազաթանգեղի: Մենք ձեռնպահ ենք մնացել եւ մնում ենք եւ այժմ այսօրինակ ուղղումներից, ոչ անգիտութեամբ, այլ այն պարզ պատճառով, որ ուր բնագիրը տարբեր իմաստ է տալիս, չի կարելի է մէկը միւսով ուղղել: Կորիւն ասում է իր գրածը յայտնի է ոչ միայն իրեն այլ եւ որոնք մատենաներ են կարգում, այսինքն գրագէտներին: Ազաթանգեղոսի միտքը ուրիշ է, որ իր գրածը յայտնի է ոչ միայն իրեն, այլ եւ յայտնի կը լինի թագաւորին, երբ նրա գրածը կարգան նրա առաջ: Կորիւն եւ Ազաթանգեղ մի ուրիշ խրատական օրինակ են տալիս նոյն ուղղութեամբ: Կորիւն ունի՞ «եւ զի ըստ աւրինակի գրելոցս առ ի մէնջ հարքն ի կատարումն դարձան»: Ազաթանգեղ նոյն բառերից հիւսում է միտք. «քանզի ըստ աւրինակի գրելոցս առ ի մէնջ ի կատարումն դարձուցաք»: Արդեօք թոյլատրելի՞ է մէկը միւսով ուղղել: Ոչ երբեք. որովհետեւ տարբեր իմաստ են արտայայտում, եւ չի կարելի ասել, տարբերութիւնը աղաւաղման հետեւանք է թէ ոչ բնագիր է:

Կորիւնի վերջաբանի մէջ մի կարեւոր կէտ անհասկանալի է մնացել պ. Ֆնտզլեանի

նին, մի կէտ, որ միանգամայն նոր լոյս է արժուում ամբողջ Յառաջարանի կերտուածի վերայ: Իերենք նախ այդ մասը ուղիղ ընթերցումով:

«Բանդի չէաք իսկ հանդուրժողք զամենայն արարեալսն կտակաւ զիւրաքանչիւրսն [նշանակել]՝, այլ ի դիւրագոյն եւ ի հեշտագոյն(ս) յառաքելական անդր զանձինս պատասպարեցաք, որոյ անցեալ զբաղմախուռն արգասեւք սրբոցն առ ի մանրակրկիտ առնելոյ զկարեւորագոյնսն պատմեաց (փոխտոպագրի պատմելոյ) . [ըւտտի եւ մեր առեալ] հանգոյնս (եւ ո՛չ զհամանգամս որպէս տպ. ընի) ասացաք, ոչ ի պատիւ սրբոցն Աստուծոյ որք ամենապարծ եւ կենդանատուր խաչիւն ծանուցեալք յարգեցան, այլ յաւրինակ քաջալերիչ հողեւոր ծննդոց իւրեանց, եւ որք նոքաւք աշակերտելոց իցեն յազգս ազգաց»:

Տեսէք ինչպէս է հասկանում Կորիւնի այս տողերը պ. Ֆնտզլեանը. «քանզի անբաւական էր ամէն ըրածները ճշդիւ գտակաւ ամէն մէկը նշանակել, դիւրագոյնին անոր առաքելական գործունէութեան պատմութեամբ զբաղեցաւ, գաղափար մը տուաւ կարեւորագոյնին վրայ»:

Կորիւն շատ խելօք մարդ չէ գուրս գալիս պ. Ֆնտզլեանի բացատրութեամբ: Նա, որ ձեռնարկել է գրելու գրի պատմութիւնը, այժմ խոստովանում է, որ «զիւրագոյնին անոր առաքելական գործունէութեան պատմութեամբ զբաղեցաւ» եւ այն էլ «կարեւորագոյնին վրայ գաղափար տալու համար»: Աւելի անմիտ բան չէր կարելի վերագրել մի մատենագրի:

Ոչ, պ. Ֆնտզլեան, «առաքելական» չի նշանակում առաքելական գործունէութիւն: Կորիւն ինքը զինքը արդարացնելու նպատակով, որ շատ բան չէ պատմել իր ուսուցչի եւ տառերի գիւտի առթիւ, կոչ է անում առաքելական օրինակին, որ է Ղուկաս աւետարանիչը:

Ինչպէս որ Ղուկասը զանց է անում պատմելու մանրակրկիտօրէն առաքեալների բաղմախուռն գործունէութիւնը, եւ արձանագրում է միայն կարեւորագոյնը, այնպէս վարում է եւ հայ հեղինակը: Առաքեալին հետեւելով, թողնում է շատ եւ բաւականանում է քչով եւ կարեւորով:

Ղուկասի յիշատակութիւնը խորհրդաւոր է:

1 [] մեր յաւելու մտերն են, () յապաւումները:

Նրան հետեւել է հայ մատենագիրը ոչ միայն այս կէտում : Աւետարանչի նախաբանը օրինակ է ծառայել եւ մեզ գրադեցնող վերջաբանին : Ղուկասը գրում է . «բանդի բազում բաժարեցին վերադարձնելու կարգել զպատմութիւն վասն իրաց հաստատելոց ի մեզ, որպէս աւանդեցին մեզ որ ի սկզբանէ ականատեալք եւ սպասաւորք եղեն բանին : Կամ եղեւ [եւ] ինձ որ ի սկզբանէ զհետ երթեալ էի ամենայնի ճամարտութեամբ կարգաւ գրել Քեզ, քաջութիւնդ, զի ծանկեցես զբանիցն, որոց աշակերտեցար, զճճարտութիւն» :

Դժուար չէ նկատել, որ կանգնած ենք այն ծառի մօտ, որտեղից քաղուած են վերջաբանի պատուհները : Գրական կերտուածը եւ բառացի մթերքը մատնում են նախաբանի խնամութիւնը Կորինի վերջաբանի հետ : Նախաբանի լոյսի տակ այլ կերպ է ներկայանում ցալթմ ընդունուած կարծիքը, որ վերջաբանը Կորինից է անցել Ագաթանգեղին : Առաջնութիւնը գոնէ այս կէտում թուում է թէ զիջանելու է Ագաթանգեղին : Սա աւելի մօտ է իր կառուցումով Ղուկասի նախաբանին : Ագաթանգեղի «ով թագաւոր» կոչականը համապատասխանում է Ղուկասի «ով թէոփիլէ» զիմումին : Նրա խօսքը՝ «յորժամ քո առաջի զմատենդ ընթեռնուցուն, յայտնի է (sc. լիցի)», համաձայնում է նախաբանի՝ «զի ծանկեցես զբանիցն, որոց աշակերտեցար, զճճարտութիւն» :

Կորին չունի «ով թագաւոր» կամ փոխարինող կոչական, ընդդէմ Ղուկասի՝ «ով թէոփիլէ»ի : Հետեւապէս Կորին չէր կարող կաղապար ծառայել Ագաթանգեղի : Կորին զեղչելով կոչականը, ստիպուած փոխում է նախադասութեան կազմը ի վնաս իմաստին : Ղուկաս գրում է, որ գիտենայ թէոփիլը, Ագաթանգեղը կրկնում է նոյնը, որ իր գրածը, «երբ կարգան թագաւորի առաջ, յայտնի լինի նրան», իսկ Կորին ի՞նչ է ասում . որ իր գրածը յայտնի է ով որ մատենաներ է կարդում եւ կամ եթէ ուզեցնք ըստ Ագաթանգեղի, ով որ իր մատենան է կարդում : Առաջին երկու հեղինակների առածը հասկանալի է, որպէս զիմում որոշ անձանց, իսկ Կորինի բերանում նոյն խօսքը կորցնում է իր raison d'être-ը, քանի որ առիթաւոր անձր չկայ մէջ տեղը :

Ղուկասը յիշում է, որ իրենից առաջ շատերն են գրել ականատեաների աւանդութեան հիման վերայ, ինչ որ ինքն եւս ուզում

է գրել որպէս ոմն, որ «զհետ երթեալ է ամենայնի», ասել է թէ եւս ականատես է : Վերջաբանի հեղինակին ծանօթ են գիտակները, որոնցից քաղում է, թէ եւ ինքն ականատես է : Արդ Ագաթանգեղ խմբագրական գործ է, եւ այս խօսքերը նրա նկատմամբ ճշմարտութիւն է : Իսկ Կորինի համար ո՞վ են այս գիտակները, արդեօք Ս . Գրքի հեղինակները, որոնցից յառաջընթացում են ի եւ որոնց թուում է թէ առանձին կարեւորութիւն է տալիս, որպէս իր գիտնականութեան վկաներ . իսկ եթէ չէ, հարկադրուած ենք ընդունելու, որ վերջաբանը պատկանում է Ագաթանգեղին եւ յարմարեցրած յետոյ կամ միաժամանակ Մաշթոցի կեանքին : Պէտք է խոստովանել, որ շատերը այն հատուածներից, որ անցած են համարում Կորինից Ագաթանգեղոսի «զարձ փրկութեան» մասը, աւելի իր տեղն են Ագաթանգեղի մօտ, քան Կորինի :

Ամէն պարագային երկու երկերը, եթէ անգամ ելած են միեւնոյն գրչից, տակաւին կնճոռոտ են իրենց փոխադարձ յարաբերութեան մէջ : Վաղածամ է պնդել Մաշթոցի վարքի ստաջնութեան վերայ ամէն կէտում :

Գուցէ աւելորդ չէ նկատել, որ Ղուկասի «կարգաւ գրել» կարող է թելադրել, որ վերջաբանի երկու ընթերցուածները կտակաւ թէ գտակաւ, թերեւս, ծագում են սկզբնական կարգաւից : Ուրիշ անգամ չեն պատահում այս բառերը Ագաթանգեղ-Կորինի մօտ, որ սիրում են կրկնութիւններ, մինչդեռ կարգաւ պատահում է (օր . գայս ամենայն կարգաւ պատմեցից, էջ 130, հատ . էջմիածնի) :

Վերջաբանի ակնարկը Ղուկասին կրկնում է Ագաթանգեղի մօտ, Վարդապետութեան ԾԹ . գլխի մէջ : Այստեղ եւս հեղինակը ծրագրում է իր անելիքը Ղուկասին հետեւելով : Սա պատմում է Քրիստոսի կեանքը յարութիւնից յետոյ շատ համառօտակի, ուստի նորէն դառնում է նոյն խնդրին Գործքի մէջ : «Այն արկեալ մեզ այսուեւեռ ի վախճան ասացելոցս, ճառս ի մէջ առնուլ . . . մանաւանդ զի առնթեր եւս ունիցիմք զդիւրահասոյց քաջաբերիչն զերանելի Ղուկաս, որ իբրողէտ եւ միջամուխ քրիստոսագործ իրացն կատարելոց ճանաչի . . . : Եւ քանզի համառաւութեամբ քանիւք առ ի կատարած աւետարանին իւրոյ զերկնաշու ճանապարհն

Քրիստոսի նշանակեաց, առնու զարձեալ յառաքելանչան յերկրորդ մատենին զօրպիսութիւն իրաց կարգել...»: Մէջ է բերում Ղուկասի նախաբանը, որով հաստատում է մեր համեմատութիւնը վերջաբանի հետ:

Սկզբի ընդգծած նախադասութիւնը նոյն միտքն է արտայայտում, ինչ որ վերջաբանի «եւ քանզի ըստ աւրինակի գրելոցս առ ի մէնջ ի կատարումն դարձուցաք»: Կորինի մօտ սոյն նախադասութիւնը կարդացում է՝ «եւ զի ըստ աւրինակի գրելոցս առ ի մէնջ հարքն ի կատարումն դարձան»: Հնարաւոր է արդեօք սրբագրել Կորինը Ագաթանգեղի կրկնակի արտայայտած իմաստի հիման վերայ: Որքան եւ հաւանական, բայց եւ այնպէս ձեռնպահ մնալու է, քանի որ ձեռագրական կոուան չկայ:



Գալով Կորինի գրութեան ժամանակին, մնում ենք նոյն կարծիքին: Պ. Ֆրնապլեանի ուղղութիւնները չեն որ պիտի փարատեն մեր կասկածները: Նրանք ոչինչ նորութիւն չեն պարունակում: Ինչ որ նոր է, շատ հին է, որ որ Ագաթանգեղ գրուած է 452—456 թուերին: Հայ բանասիրութիւնը երջանիկ կը լինէր, եթէ կարողանար այսպիսի ճշգրտութեամբ որոշել որեւէ մատենագրի, անգամ Ս. Գրքի թարգմանութեան տարեթիւր: Հայ գրի անդրանիկ երկերի յաջորդական կապը որոշելու փորձերն իսկ բարսում են զժուարութեանց:

Կորինի մերձաւորութիւնը Ագաթանգեղի, Եւթաղի եւ Մակաբայցեոց գրքին, յայտնի է: Սակայն սրանց փոխադարձ յարաբերութիւնը մնում է խորհրդաւոր: Աւելի քան կասկածելի է, որ միեւնոյն գրչից ելած լինին:

Ուրիշ անգամ այն միտքն ենք յայտնել, որ Լուսաւորչի կեանքը գրի առնելու նախաձեռնութիւնը պատկանում է, թերեւ, իրեն Մաչթոցին: Կորին շարունակել է իր ուսուցչի գործը, լրացրել եւ իր անձնական կնիքը գրել նրա վերայ: Ագաթանգեղ խրմբագրական ձեռնարկ է եւ խմբագրողի ձեռքի հետքերը նշմարելի են: Դժուար չէ նաեւ գատել հինը նոր յաւելումներից:

Ինչ վերաբերում է Եւթաղին եւ Մակաբայցեոց գրքին, բաւարար հիմք չկայ սրանց թարգմանութիւնը Կորինին վերագրելու: Թուում է թէ յեղուական եւ ոճային ինամու-

թիւնը բացատրելու է նրանով, որ Կորինն է կրում նրանց ազդեցութիւնը: Առենք նախ Եւթաղի նախադրութիւնները: Կան նմանութիւններ, որ վկայում են աւելի այն մասին, որ Կորին բանաբաղ է, քան թարգմանիչ:

Կորին. «Թէպէտ եւ էի կրտսերագոյն եւ առաւել քան զկար մեր գրաւեալ անաչառ հրամանին հասելոյ»...

Համեմատել Գործք Առաք., Յառաջ. (էջ 723, հր. 204րայ), «զի անտի զմեզ հայրենի հրամանն յանդգնել աւելի քան զկար մեր գրաւեաց»...

Կորին, «զի կամարագոյնս նախիցեմք գիւմատարած ալեաւքն վարդապետական ծովուն»...

Համեմ. Կթղ. Յառաջ. (էջ 750). «զոր աւրինակ եթէ փոքր նաւակաւ ոք կարծից է գիւմատարած զծովն հատնել անցանել»...

Կորին. «տրամական հոգևովք պաշարեալ եւ քակարդապատեալ կայ»...

Համեմ. Գործք. Առաք. Յառաջ (էջ 723). «զանուանակիր աստուածեղէն պատգամացն զմիջամուխ իմաստութեան... որ շուրջ զքեւ քակարդապատեալ»...

Կորին. «ոչ ի մէնջ արուեստախաւսեալ մերոյն կարծեաւք վիճարանելով»...

Համեմ. Պաւլ. թղթ. (էջ 765) զգիւրացոյցն զգիւտոս իսկ արուեստախաւսեալ»...

Կորին. «ամի ամի գումարելովք ի նոյն ասեանն զնոյն յիշատակն տաւնախմբեն».

Համեմ. Պաւլ. թղ. (էջ 764), «ամի ամի գաւր յիշատակի նորա տաւնախմբեն».

Նմանութիւնն այնքան ակնյայտնի է, որ երկու ենթադրութիւն կարող է լինել, կամ Կորին է փոխառու, կամ ինքն է թարգմանել Եւթաղի գործքը եւ այնուհետեւ նոյն դարձուածները կիրարկել Մաչթոցի կեանքին մէջ: Կորինի ոճը, որքան որ կարելի է դատել ըստ Մաչթոցի կեանքի, իրաւունք չէ տալիս երկրորդ ենթադրութեան: Կորին չէ Եւթաղի թարգմանը: Նմանութիւնը արդիւնք է բանաբաղութեան: Կորին ծանօթ է երեւում ոչ միայն Եւթաղի, այլ եւ ընդհանրապէս Ս. Գրքի նախադրութեան: Մի շարք բնորոշ բառեր մատնում են նրա ծանօթութիւնը—անուանակիր, միջամուխ, աստուածամերձ, արգիւնական, թեքել (ի հրէից անտի, էջ 809), հրապարակախոս:

Նոյնը կարելի է առել եւ Մակարայեցւոց գրքի մասին, որ դժուար թէ Կորինթի գործ լինի: Ոչ Եւթազ եւ ոչ Մակար. գիրքը հասակակից չեն Ս. Գրքի միւս մասերի թարգմանութեան: Նրանք պատկանում են Ե. դարի երկրորդ կէսին:

Կոնիբերը կարծիք էր յայանել, որ Եւթազ թարգմանուած է 448ին, նրա հիմը շարժական տոմարի հաշիւներն են: Հ. Վարդանեան, որ ներկայումս զբաղուած է Եւթազի քննական հրատարակութեամբ, թուում է թէ համամիտ է հանգուցեալ հայագէտին: Պաւղոս առաքեալի մահուն ամսաթիւը ինչ ինչ անհարթութիւններ է ներկայացնում եւ ասորամակեղոնական տոմարի համապատասխանը թիւը տակաւին պէտք ունի քննութեան: Հայ ամսաթիւը մերձաւոր կապ ունի ասորամակեղոնականի. ուստի եւ ստոյգ ընթերցումը գեո խնդրական է, եւ տոմարական հաշիւները վաղածամ եւ կարօտ վերաքննութեան:

Նոյն շարժական տոմարը, սակայն, աւելի հաստատ կուտան է տալիս որոշելու Մակարայեցւոց գրքի թարգմանութեան ժամանակը: Մակար. երկրորդ երիցս յիշում է ահեկան ամիսը, «մինչեւ յերեսուն ահեկանի ամսեան» (ԺԲ. 30) եւ «յամսեանն ահեկանի, որ աւր հնգետասան էր» (ԺԱ. 33) յոյն բնագիրն ունի՝ μέχρσι τριακάδος ξαδιχοῦ եւ ξαδιχοῦ πέμπτηγ καὶ δεκάτηγ, այսինքն 30 քսանթիկ ամսի եւ 15 քսանթիկ ամսի: Քսանթիկ ասորամակեղոնական տոմարով տարուայ եօթերորդ ամիսն է: Ասորամակեղոնական տարին սկսում է հոկտեմբերի մէկից, ուրեմն քսանթիկի 15 գալիս է ապրիլի 15ին եւ քսանթիկի 30 ապրիլի 30ին (աւելի ստոյգ հաշուով ապրիլի 13ին եւ 28ին) ամսորամակեղոնական տարին հաշուում է 12 ամիս, ամիսը 30 օր եւ հինգ աւելեաց, տարուայ սկզբից մինչեւ եօթերորդ ամսուայ 15 օրը — անում է 195 օր, հաշուելով հոկտեմբերի մէկից, 195երորդ օրը կը գայ ապրիլի 13ին, եւ սոյն հաշուով 30 քսանթիկի հաւասար է ապրիլի 28ին): Արդ եթէ հայ ահեկանի 15 համապատասխանում է քսանթիկի 15ին եւ ապրիլի 13ին, եւ ահեկանի երեսունը քսանթիկի 30ին եւ ապրիլի 28ին, նաւասարգը, նշանակում է սկսում էր օգոստոսի 1ին: Իսկ նաւասարգը ընկնում է շարժական տոմարով օգոստոսի մէկին 468ին:

Հաշուելով, որ քսանթիկի 15 հաւասար է ապրիլի 15ին (եւ ոչ 13), ուրեմն եւ ահեկանի 15 հաւասար նոյն ապրիլի 15ին, կը ստանանք որ նաւասարգը ընկնում է օգոստոսի 3ին, որ տեղի ունենալ կարող էր 460 քաւին: Ասել է թէ Մակարայեցւոց գիրքը թարգմանուած է 460—468 թուին: Եթէ ընդունինք Կոնիբերի դիտողութիւնը Պաւղոս առաքեալի մահուն օրաթիւի վերաբերեալ, կը գանք նոյն թուին: Եւթազի յառաջարանում ասուած է, որ Պաւղոս նահատակուց «յառաջ քան զերիս կաղանգացն յուլեայ», որ է Յունիսի 29: Հայ բնագիրը տարբեր ընթերցուածներ է տալիս եւ, ինչպէս ասացի, հաւանական են համարում «որ է մարգաց» ընթերցումը: Եթէ ահեկանի 15 հաւասար է ապրիլի 15ին, յունիսի 29 կը գայ ուղիղ մարգաց 30ին: Ասել է թէ Եւթազի թարգմանութիւնը եւս տեղի է ունեցել 460—464 քառամեակին:

Ինչպէս եւ բացատրելու լինենք Կորինի, Եւթազի, Մակարայեցւոց գրքի, նաեւ Ազաթանդեղի փոխադարձ յարաբերութիւնը, գաղտնիքը որոնելու է 460 թուից յետոյ: Տրամագիր չենք չափազանցելու տոմարական վկայութեան արժէքը, բայց ուրանալը եւս անկարելի է, մանաւանդ երբ գայիս են հաստատելու բանասիրական—պատմական քննութեան կասկածները:

ՊՐՈՓ. Ն. ԱՂՈՍՑ

Պարիս, 25 Նոյեմբեր 1927:

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄԵԱՆ ՎԱՆՆ, Գիւղաշխարհ: Պատմական, ազգագրական ուսումնասիրութիւն: Պարիս 1927: 8°, էջը 9 + 279: Տպ. «Տարօն»:

«Գիւղաշխարհ»ի նիւթն է Սերաստիոյ նահանգի պատմական ու ազգագրական ուսումնասիրութիւնը: Սերաստիա իր ամբողջ նահանգովը թէեւ միշտ Հայաստանի մաս չէ կազմած, սակայն հինէն ի վեր Հայերու բնակավայր հանդիսացած եւ ԺԱ. դարուն հայկական գետին եղած է՝ յատուկ հայ թագաւորութեամբ:

Վ. Համբարձումեանի գիրքը երեք բաժանում ունի. առաջին մասին մէջ (էջ 1—48)